

«Ուրարտու» համալսարանը 20 տարեկան է

Սեդրակ Աղասու Սեդրակյան



Ամեն մի հոբելյան, անշուշտ, յուրատեսակ հաշվետվություն է, անցած ուղին արժեւորելու և առաջընթացը նախանշելու մի սահմանագիծ, ինքնաճանաչման մի նոր աստիճան: Եվ հոբելյանը լույս ու պատիվ է, ինք-

նահաստատման մի նոր պատվանդան, եթե նրա կենսագրությունը հյուսվել է սիրով ու նվիրումով, քրտնաջան ու համբերատար աշխատանքով, դիմակայելով գոյության մարտահրավերներին՝ դարձել մարդկային մտքի օրորոց ու դարբնոց, ժամանակի շնչառությամբ դարձել հայրենյաց երկրի առաջընթացի մի մասնիկը:

Հենց այդպիսի կերպարով ու նպատակադիր ձեռքբերումներով է իր 20-ամյա հոբելյանական հանգրվանին հասել հանրապետության առաջատար բուհերից մեկը՝ Երևանի գործնական հոգեբանության և սոցիոլոգիայի «Ուրարտու» համալսարանը: Արարումի և որոնումների քսան տարիներ: Առլեցուն տարիներ:

Մեծ խորհուրդ կա այդ հասակի մեջ. «Ուրարտու» ստեղծվել է մեր հանրապետության անկախության հաստատման առաջին օրերին, հասակակիցն է նորանկախ Հայաստանի, ծնունդը նոր հասարակական հարաբերությունների: «Ուրարտու» կայացել է դժվարին, բայց հուսալից տարիների ընթացքում: Խորհրդային հասարակարգի փլուզումն ուղեկցվում էր բարդ ու ծանր, հաճախ ողբերգական իրադարձություններով: Իրար էին հաջորդում Արցախի ազատագրական պայքարն ու անկախության համազգային շարժումը, Սպիտակի ավերիչ երկրաշարժը, տնտեսական շրջափակումն ու նոր կացութաձեռի ձեւավորման անսխաղեպ տարիները: Այդպիսի պայմաններում, երբ օրվա հրամայական էր գոյատևման խնդիրը, գիտության և կրթության հարցերը ակամա մղվել էին հետին պլան:

Աղետից հետո, երբ փորձ արվեց հոգեբանական աջակցություն ցույց տալ երկրաշարժից տուժած մարդկանց, պարզվեց, որ գործնական հոգեբանության ոլորտում մասնագետների գիտելիքները և հմտությունները թերի էին: Կային լավ տեսաբան հոգեբաններ, բայց իրականում բացառաբառում էր գործնական հոգեբանական աշխատանքի փորձը:

Ավարտել է Երևանի պետական համալսարանի փիլիսոփայության, սոցիոլոգիայի և հոգեբանության ֆակուլտետը, ապա՝ համալսարանի ասպիրանտուրան, ԽՍՀՄ մանակավարժական գիտությունների ակադեմիայի հոգեբանության ինստիտուտը, ԱՄՆ-ի Կալիֆորնիայի նահանգի ընտանեկան և խմբային հոգեբանության վերապատրաստման դասընթացը, Երևանի պետական համալսարանի դոկտորանտուրան: 1999թ. հիմնադրել և ղեկավարում է «Հայաստանի զործնական հոգեբանների միավորում» հասարակական կազմակերպությունը:

Ընտրվել է միջազգային հոգեբանների խորհրդի անդամ (1990թ.), Ֆրանսիական հոգեվերլուծության ասոցիացիայի անդամ (1996թ.), Կանադայի հոգեբանական ասոցիացիայի անդամ (1997թ.):

1988-1993թթ. ղեկավարել է Սպիտակի երկրաշարժից տուժած՝ Գյումրիի Հայ Օգնության Սիության կազմակերպած Հոգեբանական ծառայության կենտրոնը: Նույն տարիներին համակարգել է ԱՄՆ-ից, Կանադայից, Ֆրանսիայից, Ռուսաստանից, Վրաստանից հրավիրված հոգեբանների, հոգեբույժների մասնագիտական աշխատանքներն աղետի գոտում:

1999-2002թթ., որպես հոգեբան-հոգեվերլուծող, ակտիվորեն մասնակցել է ֆրանսիական հոգեվերլուծական կազմակերպության հիմնադրած՝ Երեխաների վաղ սոցիալականացման «Կանաչ տուն» կենտրոնի աշխատանքներին:

Հեղինակ է շուրջ 140 գիտական հոդվածների, թեզիսների, ուսումնամեթոդական աշխատանքների, մենագրությունների: Դեկավարել է մի շարք թեկնածուական ատենախոսություններ, խմբագրել երկու տասնյակից ավելի դասագրքեր, ձեռնարկներ, մենագրություններ: 2011թ. նրա «Ընտանիքի հոգեբանություն» մենագրությունը ներկայացվել է ՀՀ պետական մրցանակի:

Հայաստանը ներկայացրել է հոգեբանների միջազգային 26-րդ (Կանադա, 1996թ.), 27-րդ (Շվեդիա, 2000թ.), 28-րդ (Հինաստան, 2004թ.) և 29-րդ (Բեռլին, 2008թ.), Եվրոպական հոգեբանական 4-րդ (1995թ.) և 6-րդ (Ռուսաստան, 1996թ.), ընտանեկան թերապիայի միջազգային ասոցիացիայի 8-րդ (Աթենք, 1996թ.) կոնգրեսներում:

1999թ. Փարիզում զեկուցումով հանդես է եկել ՅՈՒՆԵՍԿՈ-յի կազմակերպած՝ Ֆրանսիական հոգեվերլուծող Ֆ. Դոլտոյի նվիրված միջազգային գիտաժողովում: 1990թ. դասախոսել է Կալիֆորնիայի պետական համալսարանի (Լոս Անջելես) հոգեբանության և հոգեվերլուծության դեպարտամենտում: 2004թ. Կալիֆորնիայում Դավիդյան-Սարիանյան կրթական ֆոնդի մանկավարժներին դասավանդել է՝ վերապատրաստման ծրագրով:

2005թ. «Ուրարտու» համալսարանի գործնական ուղղվածության, ինչպես նաև ուսումնագիտական ակտիվ գործունեության համար «Բարձր որակի և գործնական գործառնությունների» միջազգային ֆոնդի նախագահությունը (Շվեդիա) Ս. Սեդրակյանին պարգևատրվել է ոսկե շքանշանով:



լուծել կրթական նոր ծրագրերի, ուսումնական դասընթացների, նոր առարկաների դասավանդման խնդիրները: Մյուս կողմից էլ «Ուրարտու»-ն պետք է հաղթահարեր «կոոպերատիվ» կոչվող կարծրատիպը, պետք է ապացուցեր, որ ազատ և որակյալ կրթությունը պիտակներ չի ընդունում:

Այսպե՛ս տեղագին որոնումների շրջանը: Հիմք ընդունելով միջազգային հեղինակավոր կենտրոնների և համալսարանների՝ ԱՄՆ-ի Ֆորդհամի, Հոլլոտերայի, Կալիֆորնիայի

խմբագրվել են երկու տասնյակից ավելի դասագրքեր:

Համալսարանի բարձր կուրսերի լավագույն ուսանողներն ուսումնական և նախադիվումային պրակտիկական անցկացնում են արտասահմանյան բուհերում և համապատասխան կազմակերպություններում: Պետության կողմից հավատարմագրված համալսարանի ուսումնական, գործնական պարապմունքները, գիտական աշխատանքները կազմակերպվում և ղեկավարվում են չորս ամբիոնների

յին լավ տեսաբան հոգեբաններ, բայց իրականում բացակայում էր գործնական հոգեբանական աշխատանքի փորձը: Լինելով ԱՄՆ-ում (Սան-Ֆրանցիսկոյում, Լոս-Անջելեսում, Նյու-Յորքում եւ այլուր), ուսումնասիրելով ամերիկյան գործնական հոգեբանության դպրոցի հետմասնավածքային, սթրեսային խանգարում ունեցողների հոգեշտկման, հոգեկարգավորման աշխատանքի փորձը՝ Սեդրակ Սեդրակյանը, խնդիր դրեց օր առաջ այն ներդրել Հայաստանում:

Ստեղծված իրավիճակներում ծնվեց եւ կենսագործվեց այդ տարիների համար համարձակ գաղափարը՝ ստեղծել ուսումնական կենտրոն: 1991թ. հոկտեմբերի 7-ին բացվեց Գործնական հոգեբանության եւ սոցիոլոգիայի «Ուրարտու» համալսարանը, որը դարձավ հանրապետության այլընտրանքային կրթության առաջնեկը՝ պրակտիկ հոգեբանության եւ սոցիոլոգիայի բնագավառում: Համախմբվելով գործնական հոգեբանության ջատագով եւ կրթության կազմակերպիչ, բուհի հիմնադիր Սեդրակ Սեդրակյանի շուրջ՝ հանրապետության անվանի հոգեբանները կարողացան կարճ ժամկետում կայացնել նոր մասնագիտական ուղղվածությամբ եւ արդի չափանիշներին համապատասխան ուսումնական հաստատություն:

Համալսարանի «շինարարները» հստակ գիտակցում էին, որ միջազգային կառույցներին ինտեգրվող նորաստեղծ պետությանը՝ Հայաստանին, անհրաժեշտ են բարձրակարգ մասնագետներ ոչ միայն տնտեսության, այլեւ գիտության, կրթության եւ մշակույթի բնագավառներում: Անհրաժեշտ էր ունենալ սեփական հոգեբանական դպրոց, որի շրջանավարտները գիտակը լինեին արդի հոգեբանական գիտության, մեր ազգային դիմագծի, սովորույթների եւ ավելի հեշտ կարողանային աշխատել բնակչության հետ: Նախկինում մնանը չունեցող ուսումնական հաստատության առաջ ծառայել էին բազմաթիվ խնդիրներ, պետք էր

ներվով միջազգային հեղինակավոր կենտրոնների եւ համալսարանների՝ ԱՄՆ-ի Ֆորդհամի, Հոլմստրայի, Կալիֆորնիայի Լա Վերն քաղաքի համալսարանների, Վրաստանի Դ. Ն. Ուզնաձեի անվան հոգեբանության ինստիտուտի, ՌԴ գիտությունների ակադեմիային կից հոգեբանների պրոֆեսիոնալ դպրոցի, կրթական բարեփոխումների փորձը՝ «Ուրարտու» համալսարանը հանրապետությունում ներդրեց խիստ գործնական ուղղվածություն ունեցող ուսումնական ծրագրեր, որոնք համալսարանի շրջանավարտին հնարավորություն տվեցին կիրառելի դարձնել հոգեբանության տեսական գիտելիքները հասարակական կյանքի ամենատարբեր ոլորտներում: «Ուրարտու»-ի արդյունավետ եւ նպատակաուղղված աշխատանքի զմահատականը եղավ պետության կողմից նրա մասնագիտությունների, բակալավրի, մագիստրոսի կրթական ծրագրերի եւ ամբողջությամբ բուհի հավատարմագրումը: Բուհի ուսանողները եւ պրոֆեսորադասախոսական կազմը ձեռնամուխ եղան եւ մինչ օրս հաջողությամբ ու ակտիվորեն մասնակցում, զեկուցումներով հանդես են գալիս միջազգային գիտաժողովներում (ԱՄՆ, Իսրայել, Հունաստան, Կանադա, Ֆրանսիա, Շվեդիա, Հունգարիա, Գերմանիա): Համալսարանում աշխատում են բարձրակարգ եւ հմուտ դասախոսներ: Համալսարանի արդյունավետ կայացման իրենց անուրանալի նպաստ են բերել անվանի պրոֆեսորներ Դ. Թուրունջյանը, Էդ. Սարգսյանը, Ս. Գրիգորյանը, Վ. Գրիգորյանը, Գ. Մխիթարյանը, Զր. Սուրադյանը, Է. Գրիգը, Ա. Նալչաջյանը, Կ. Նազարեթյանը, Գ. Շահվերդյանը, Մ. Գարագաշյանը եւ Ա. Գեոնջյանը (ԱՄՆ), Ա. Արյանը (Արգենտինա), Ա. Գիլանը (Ֆրանսիա) եւ այլք: «Ուրարտու» համալսարանի գիտական խորհրդի երաշխավորությամբ հրատարակվում են բուհի դասախոսների բազմաթիվ հոդվածներ, թեզիսներ, ուսումնամեթոդական ձեռնարկներ, մենագրություններ,

նական պարագիծները, գիտական աշխատանքները կազմակերպվում եւ դեկավարվում են չորս ամիսները կողմից: Համալսարանում իրականացվում է եռաստիճան ուսուցում՝ բակալավրի, մագիստրոսի եւ հետբուհական (ասպիրանտուրայի) կրթական ծրագրերով: Բուհի շրջանավարտներից շատերն այսօր ունեն հոգեբանության գծով գիտական աստիճաններ: Այսօր մեր երկրի հասարակական կյանքի տարբեր ոլորտներում աշխատում են բուհի շուրջ 1500 շրջանավարտներ:

Ուսումնական գործընթացին զուգահեռ՝ համալսարանի գործունեության կարեւորագույն ուղղվածություն է ապահովում ընտանիքի հոգեբանական հիմնախնդիրների ուսումնասիրման գիտահետազոտական կենտրոնը, որտեղ անվանի հոգեբանների հետ աշխատում են նաեւ բուհի լավագույն շրջանավարտները:

Ուսանողների միջբուհական խորհրդի նախաձեռնությամբ կազմակերպվում են ուսանողական գիտական ընկերության գիտաժողովներ, մարզական միջոցառումներ, ցերեկույթներ, համատեղ արշավներ, մշակութային այլ միջոցառումներ: Համալսարանն այսօր հպարտանում է մասնագիտական գրականությամբ հարուստ իր գրադարանով, որը կրում է մշակավոր հայ հոգեբան Դ. Թուրունջյանի՝ համալսարանի հիմնադիր պրոֆեսորներից մեկի անունը:

Նայում ենք հետ: «Ուրարտու» համալսարանն անցել է նորանկախ Հայաստանի Հանրապետության կայացման, տառապանքների, բազմաթիվ արգելքների ու դժվարությունների հաղթահարման բոլոր պահերը եւ ... կայացել: Այսօր երիտասարդի խանդավառությամբ, սակայն հասունությանը բնորոշ արժանապատվությամբ եւ հպարտությամբ Գործնական հոգեբանության եւ սոցիոլոգիայի «Ուրարտու» համալսարանը ոտք է դնում իր երրորդ տասնամյակը:

Բարի երթ:



«Կրթություն» շաբաթաթերթի հաջորդ համարը լույս կտեսնի հոկտեմբերի 14-ին

ՀԻՄՆԱԴԻՐ՝
ՀՀ ԿԳՆ
«Կրթություն» թերթի
խմբագրություն» ՊԹԲԸ

<p>Գրանցման վկայական՝ 014-04349, Տրված է՝ 11.01.2001թ. Պասիլ՝ 69312, Հասցեն՝ ՏԻԳՐԱՆ ՄԵԾԻ 67, E-mail: krtsun@yandex.ru ԳեՆ. 57 49 56</p>	<p>Խմբագրությունը ստացված թղթակցությունները եւ նամակները չի գրախոսում եւ ետ չի վերադարձնում: Գովազդային նյութերի բովանդակության համար խմբագրությունը պատասխանատվություն չի կրում: Հղումը պարտադիր է:</p>	<p>Տպագրված է «ՏԻԳՐԱՆ ՄԵԾ» հրատարակչության տպարանում: Տպաքանակը՝ 4000: Ծավալը՝ 2 տպագրական մասով: Ստորագրված է տպագրության՝ 11.10.2011թ. Գինը՝ 100 դրամ:</p>	<p>Համարի պատասխանատու՝ Գլխավոր խմբագիր՝ Գագիկ ՄԻՆԱՍՅԱՆ</p>
--	--	--	---